

Արշավ աշխատավարձային նախագծերի շրջանակներում նոր ներգրավվող ընկերությունների և աշխատակիցների համար

Անկանխիկ գործարքները խթանելու նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) և VISA ընկերությունը ներկայանում են աշխատավարձային նախագծերի արշավով:

Արշավին կարող են միանալ՝

- Արշավի գործողության ժամկետի ընթացքում աշխատավարձային նախագծերի ներքո համագործակցություն հաստատած ընկերությունների աշխատակիցներ,
- Հաճախորդներ, ովքեր աշխատավարձ են ցանկանում ստանալ Բանկի միջոցով

Արշավը գործում է 2025թ. հունիս 11-ից մինչև 2025թ. Դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հետվճարի պայմանը գործելու է 2025թ հուլիսի 1-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ քարտով կատարված անկանխիկ վճարների դիմաց:

Արշավի պայմաններն են.

1.Արշավ աշխատավարձային նախագծի շրջանակներում ներգրավված ընկերությունների աշխատակիցների համար

Ծառայություն	Արշավի պայման
Visa Classic	Անվճար
Visa Gold	Անվճար 1 հատ 400,000 ՀՀ դրամ և ավել զուտ աշխատավարձի դեպքում
Visa Platinum	Անվճար 1 հատ 800,000 ՀՀ դրամ և ավել զուտ աշխատավարձի դեպքում
Visa Signature	Անվճար 1 հատ 1,500,000 ՀՀ դրամ և ավել զուտ աշխատավարձի դեպքում
Անգրավ սպառողական վարկերի, օվերդրաֆո/վարկային գծերի տարեկան տոկոսադրույք	15% ՀՀ դրամ (Փաստացի տոկոսադրույք 16,08%)
Հետվճար՝ դրամային Visa Classic/Gold/Platinum/Signature տեսակի քարտով կատարված անկանխիկ վճարման դիմաց*	3%՝ նվազագույնը 1,000 ՀՀ դրամ առավելագույնը 3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար (ներառյալ հարկերը), ամսական առավելագույնը 30,000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը)*
Բարձր օղակի ղեկավարների համար 2 Visa Platinum կամ 2 Visa Gold դասի քարտի տրամադրում	0 ՀՀ դրամ
MyAmeria	Անվճար
Ինտերնետ Բանկ համակարգ ընկերության հաշիվների սպասարկման համար	4 տարի ժամկետով առանց սպասարկման վճարի

2. Արշավի պայմաններ Բանկով աշխատավարձ ստացող անհատների համար

Ծառայություն	Առաջարկվող սակագին
Ավելին աշխատավարձային փաթեթ	0 ՀՀ դրամ
Անգրավ սպառողական վարկերի օվերդրաֆտ/ վարկային գծերի տարեկան տոկոսադրույք	15% ՀՀ դրամ Փաստացի տոկոսադրույք 16,08%
Հետվճար՝ դրամային Visa Classic քարտով կատարված անկանխիկ վճարման դիմաց*	3%՝ նվազագույնը 1,000 ՀՀ դրամ առավելագույնը 3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար(ներառյալ հարկերը), ամսական առավելագույնը 30,000 ՀՀ դրամ(ներառյալ հարկերը)*

* Հետվճար չի տրամադրվելու կոմունալ վճարումների, քարտից քարտ և հաշիվների միջև փոխանցումների, էլեկտրոնային դրամապանակների լիցքավորումների և դրանցով կատարված գործարքների (բացառությամբ Apple Pay և GPay համակարգով կատարված գործարքների) և բուքմեյքերական ընկերությունների հաշիվների լիցքավորումների համար: Հետվճարը իրականացվում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող այն քարտային հաշվին, որով կատարվել է վճարումը: Հետվճարը տրամադրվում է մինչև բանկում հետվճարի հաշվառման ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը: